Լրամշակված նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-923²-23.09.2024-ՊԱ-011

«ԱՐՏԱՔԻՆ ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Արտաքին հետախուզական գործունեության և արտաքին հետախուզության ծառայության մասի» 2022 թվականի դեկտեմբերի 23-ի ՀՕ-600-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածի 2-րդ մասը «ազգային անվտանգության մարմինների,» բառերից հետո լրացնել «պետական պահպանության մարմնի,» բառերով:

Հոդված 2. Օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասը «ազգային անվտանգության,» բառերից հետո լրացնել «պետական պահպանության,» բառերով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ

Լրամշակված նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-923²-23.09.2024-ՊԱ-011/1

«ԱՐՏԱՔԻՆ ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Արտաքին հետախուզական գործունեության և արտաքին հետախուզության ծառայության մասի» 2022 թվականի դեկտեմբերի 23-ի ՀՕ-600-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածի 2-րդ մասը «ազգային անվտանգության մարմինների,» բառերից հետո լրացնել «պետական պահպանության մարմնի,» բառերով:

Հոդված 2. Օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասը «ազգային անվտանգության,» բառերից հետո լրացնել «պետական պահպանության,» բառերով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՏՈՒԿ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՆՁԱՆՑ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԱՐՏԱՔԻՆ ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՏԵՍԱՆԿԱՐԱՀԱՆՈՂ ԿԱՄ ԼՈՒՍԱՆԿԱՐԱՀԱՆՈՂ ՍԱՐՔԵՐՈՎ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-923-23.09.2024-ՊԱ-011/1) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«ՀԱՏՈՒԿ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՆՁԱՆՑ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»					
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդվածում	Առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածում «23-ի» թիվը փոխարինել «3-ի» թվով՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ օրենքի լրիվ անվանումը հիշատակելիս ներառվում են օրենքի **ընդունման տարին, ամիսը և ամսաթիվը:**	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին, 2-րդ և 3-րդ հոդվածներում	Առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածի 1-ին կետով «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասում լրացվող նոր՝ 19.1-ին և 19.2-րդ, 2-րդ հոդվածով Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող 4.1-ին կետի և 3-րդ հոդվածի 1-ին կետով Օրենքի 13-րդ հոդվածում լրացվող 8.1-ին կետերի համարակալում տեքստից բաժանել միայն փակագծով:	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	Ընդունվել է:

3.	ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդվածում	Նախագծի 2-րդ հոդվածում «4.1-ին կետով» բառերն առաջարկում ենք փոխարինել «4.1-ին և 4.2-րդ կետերով» բառերով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հոդվածը լրացվել է նոր 4.2-րդ կետով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:
4.	ՀՀ կառավարություն	Նախագծի 2 րդ հոդվածում	«Պաշտպանության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասին 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ ՊՊԾ-ն դասվում է այլ զորքերի շարքին, իսկ նույն օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն «(...) Պատերազմի կամ ռազմական դրության ժամանակ զինված ուժերի կազմում ընդգրկվում են նաև այլ զորքերը: (...)»: Միևնույն ժամանակ «Պաշտպանության մասին» օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասը այլ զորքերի մասնակցությունը զինված ուժերի կողմից իրականացվող գործողություններին սահմանափակում է միայն «իրենց իրավասությունների շրջանակներում՝ (...)»: Ելնելով վերոգրյալից և Նախագծով նախատեսվող կարգավորումների լիարժեքությունն ապահովելու նպատակից՝ առաջարկվում է համապատասխան լրացում նախատեսել օրենքում, քանզի գործող կարգավորումներում ՀՀ ՊՊԾ-ի կողմից մարտական գործողությունների մասնակցելու իրավասություն չի նախատեսվում: Ըստ այդմ, առաջարկում ենք Նախագծի 2-րդ հոդվածը լրացնել նոր՝ 4.2 կետով հետևյալ բովանդակությամբ՝ «4.2) պատերազմի կամ ռազմական դրության ժամանակ իրենց իրավասության շրջանակներում Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը մասնակցելը»: »	Ընդունվել է: Կատարվարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:
5.	ՀՀ կառավարություն	Նախագծի 16-րդ հոդված	Առաջարկում ենք Նախագծի 16-րդ հոդվածի վերնագիրը հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասում սահմանված պահանջը, այն է. «Օրենսդրական ակտի հոդվածները ունենում են	Ընդունվել է: Կատարվարվել է համապատասխան	Ընդունվել է:

			վերնագրեր, բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի:»	փոփոխությունը:	
6.	ՀՀ կառավարություն	Նախագծի 16-րդ հոդվածում	Առաջարկում ենք Նախագծի 16-րդ հոդվածի 1-ին մասում «հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը» բառերը փոխարինել «հրապարակմանը հաջորդող օրվանից» բառերով՝ փաթեթում ընդգրկված բոլոր նախագծերի ուժի մեջ մտնելու ժամկետների նույնանմանությունն ապահովելու համար:	Ընդունվել է: Կատարվարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:
7.	ՀՀ կառավարություն	Նախագծի 16-րդ հոդվածում	Առաջարկում ենք Նախագծի 16-րդ հոդվածի 4-րդ մասում «իրավական ակտերն» բառեր փոխարինել «ենթաօրենսդրական իրավական ակտերն» բառերով:	Ընդունվել է: Կատարվարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:
**«ԱՐՏԱՔԻՆ ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»					
1.	ՀՀ կառավարություն	Վերնագրում	«Արտաքին հետախուզական գործունեության և արտաքին հետախուզության ծառայության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագրում «ԼՐԱՑՈՒՄ» բառը փոխարինել «ԼՐԱՑՈՒՄՆԵՐ» բառով՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ նշված նախագծով կատարվում են մեկից ավելի լրացումներ:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:
«ՏԵՍԱՆԿԱՐԱՀԱՆՈՂ ԿԱՄ ԼՈՒՍԱՆԿԱՐԱՀԱՆՈՂ ՍԱՐՔԵՐՈՎ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒԹԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»					
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդվածում	Նախագծի 1-ին հոդվածում հանել «(այսուհետ՝ Օրենք)» ձևակերպումը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ քննարկվող նախագծում օրենքին այլևս հղում չի կատարվում:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է: